ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱԾԱՆՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅՈՒՄ» (1887-1900 ԹԹ.)

Ածանցումը բառակազմական ամենակենսունակ եղանակն է[1]: Վերջածանցները իմաստային կապակցելիությամբ ավելի ընդգրկուն են, քան նախածանցները, որոնք ոչ միայն քանակային տեսակետից են զիջում, այլև իմաստային. դրանք միայն բառակազմական նշանակություն ունեն[2], մինչդեռ վերջածանցները բառակազմական լինելով հաճախ նաև խոսքիմասային ցուցիչ են[3]: Ածանցները կարող են իմաստային իրենց արտահայտությամբ փոխարինել արմատական բաղադրիչներով նկարագրությանը[4], ուստի ածանցման միջոցով կարճվում է արմատների բազմանդամությունը, հետևաբար նաև կանխվում է տերմինի անբարեհնչությունն ու երկարաբանությունը: Արմատի փոխարեն ածանցի կիրառելիության փաստն այն է, որ հայերենում երկարմատ կազմությամբ ածանցավորներն ավելի շատ են[5], այսինքն՝ երկարմատ բարդ բառերի բաղադրիչների հետագա ընդլայնումը հիմնականում կատարվել է ածանցման միջոցով:

Ածանցումը նկարագրելիս կանգ կառնենք ինչպես տերմինակերտման, այնպես էլ բառակապակցական տերմինների կազմում ոչ տերմինների կերտման դեպքերին, քանի որ վերջիններս ևս մասնակցում են կապակցության տերմինային իմաստի արտահայտմանը. «...բաղադրյալ տերմինի բաղադրիչներից յուրաքանչյուրը բնորոշում է առանձին հասկացություն..., իսկ տերմինն ամբողջությամբ՝ մի նոր հասկացություն[6]»:

Կանդրադառնանք՝ ածանցների տերմինակազմական առանձնահատկություններին, ապա դրանց կիրառելիությանը, այսինքն՝ թե որ ածանցը

---

[1] Տես Լ. Հ. Ղազանչյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ԼՈՀ, IV, Երևան, 1977, էջ 282-283:
[2] Տես նույն տեղը, էջ 285:
[3] Տես Ռ. Խ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՀ, IV, Երևան, 1977, էջ155:
[4] Տես Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 325:
[5] Տես Ռ. Խ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 157:
[6] Տես Լ. Հ. Ղազանչյան, նշվ. աշխ, էջ 326:
* Տեսական մասը ներկայացնելիս նաև օգտվել ենք ժամանակակից բառակազմության ուսումնա-սիրություններից, հաշվի առնելով, որ բառակազմական օրինաչափությունները «զգալիորեն կայուն են» (Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, ՊԲՀ, 3 (94), Երևան, 1981, էջ 32):

տերմինակազմությանը որքանով է մասնակից և բաղադրելիությանը, թե ինչ նախատիպերի է միանում: Ածանցումը կներկայացնենք ըստ նախածանց, վերջածանց և համածանց դիրքերի:

1. Ածանցների տերմինակազմական առանձնահատկությունները: «Տեսականորեն հայերենի բոլոր գոյականները կարող են ստանալ անժխտական նախածանցը[7]». *ան-* նախածանցը, ժխտելով նախածանցավոր կազմությունը, կարող է կրկնածանց գործածության մաս կազմել՝. գրաբեան *անբաղադրեալ* (incoherent) գործողութեանց սկզբունք (1888,5,76): Այս կիրառության մեջ *բաղ-* նախածանցը միացել է մի արմատի, որը պարունակում է նրա «կից, միասին» նշանակությունները. դրանք *զոյգ*-ն անածանց ինքնին է արտահայտում, ուրեմն այս հարաբերության մեջ *բաղ-*ն օգտագործվել է որպես հավելյալ միջոց բառիմաստն ընդգծելու համար և ձեռք է բերել սաստկական նշանակություն:

Նախակից ծեւ (1891,2,44) բաղադրյալ տերմինում *նախ-* ածանցի նշանակությունը կարող է երկու կերպ ընկալվել. ա/ վերաբերում է սեռային տերմինատարրին, սակայն կցվել է տեսակային տերմինատարրին՝ և մջջնորդավորված է տեսակավորել սեռայինի իմաստը, բ/ ունի արմատական արժեք, բացատրվում է որպես *նախկինին կից*: Այս վերջին բացատրությունն ավելի հավանական է, քանի որ ունենք նաև *հնդեւրոպական նախաւոր լեզու* (1899,8,234) կազմությունը, որտեղ ևս հնարավոր է երկու բացատրություն. ա/ քանի որ չի կարող լինել անարմատ կազմություն, ապա *նախ-*ը ունի արմատական արժեք, նշանակում է *նախկին*, ածանցված՝ *նախկինավոր*, սրան իմաստային առնչություն ունի *նախնական*-ը (*նախնական այբբենարան* 1888,10, 166), որը ևս, ինչպես *նախաւոր*-ը կազմված է ածականակերտ ածանցով, բ/ հնարավոր է առաջացած լինի բարդ տերմինի տարրալուծման հետևանքով: Հանդեսում կան *նախալեզու* (1887,10,146), *ընդհանուր նախալեզու* (1897,3,70), *հնդեւրոպական նախալեզու* (1898,5,145) տերմիններ: *Նախաւոր լեզու*-ն կարող է առաջացած լինել *նախալեզու* տերմինի տարրալուծման հետևանքով, երբ առաջին տերմինատարրը առանձնացվում է, դառնում ինքնուրույն գործածությամբ միավոր և ապա *-աւոր* ածականակերտ ածանցի միջոցով որպես տեսակ կապվում է սեռային տերմինատարրին: Բարդ տերմինը բառակապակցականի վերածելու այլ օրինակ. «Կրաւորականի եւ հասարակի *դիմանշանք* միաձեւ են...: Առաջինն, երբեմն միայն, ... յա յատկանիշով կը տարբերի երկրորդէն. այս վերջին պարագային կրաւորականը ներգործականի *դիմակերտ նշաններն* ալ կրնայ առնուլ» (1890,5,151): *Դիմանշան- դիմակերտ*

---

[7] Ս. Ա. Գալստյան, Ան- ժխտական նախածանցով բաղադրությունները ժամանակակից հայերենում, ԼՀԳ, Երևան, 1973, N 5, էջ 75:

նշան անցումը կարող է նաև ածանցի միջոցով տեղի ունենալ. *դիմանշան-դիմային, դիմավոր նշան.*

Նախդիր տերմինը, ըստ ՆՅԲ-ի, գոյական է, ըստ ԼԲ-ի, «համանշանակ է նախադրություն տերմինին[8]», այսինքն՝ համարժեք է իր՝ ածանցված տարբերակին: ՅԱ-ի օրինակներով՝ «անանջատ *նախդիրներն* պատ եւ պար» (1887, 11,163), «*նախադրութեանց* հոլովառութեանց անկանոնութիւնք» (1891, 12, 362): Սակայն ՅԱ-ն այս տերմինն ունի նաև դերբայական նշանակությամբ, երբ նախ- ածանցի նախատիպը բայն է, որը կապակցության մեջ դերբայական նշանակություն է ստանում. նախ-դիր որպես նախադրվող, սկզբից դրվող. «*նախդիր*-դերանուն» (1897,7,212), մակբայ լրացումով «կերպախօսապէս *նախդիր* լեզուներ» (1897,5,154), -ութիւն-ով բայանուն դարձած՝ «Ներգոյականն արեւելեան բարբառոյն մէջ ում (ըմ, ամ) կը վերջաւորի, մինչ արեւմտեանը մէջ (Տ.Ս.- կը-ի) *նախադրութեամբ* կը բացատրէ...» (1890,2,42): ՅԱ-ն ունի նաև հոմանշային տարբերակ՝ «*յառաջադիր* բաղածայն» (1896,8,228):

Յասարակօրէն լեզու (1888,10,171) բաղադրյալ տերմինում *-օրէն* մակբայակերտը ստացել է ածականակերտ արժեք, քանի որ նշված բաղադրյալ տերմինը գործածված է տերմինատարրի կրճատումով. պակասում է *գործածուած* բաղադրիչը, որ պահպանված է *հասարակօրէն գործածուած բառեր* (1898,4,100) տերմինում: *Ռամկօրէն գրութիւն* (1888,3,33) բաղադրյալ տերմինում, եթե *գրութիւն*-ը *գրել* բայից է բաղադրված, ապա տերմինատարրի կրճատում չկա. *ռամկօրէն գրել- ռամկօրէն գրութիւն. -Օրէն*-ը կարող է նաև մակբայակերտ նշանակությունը կորցնել՝ հանդես գալով փոխանունական կիրառություններում. *հին-հայ ռամկօրէն* (1900,1,19), *զուտ ռամկօրէն* (1889, 1,2), *գրաբարախառն ռամկօրէն* (1889,1,2), *գրաւոր ռամկօրէն* (1890,5,102):

Պայթուցիկ (explosives) (1899,10,290) տերմինի փոխարեն այժմ գործածվում է *պայթական*, քանի որ ժամանակակից հայերենում պատճառական բայի գրաբարյան հիմքը որպես –իկ ածանցի նախատիպ գործածական չէ, և ընդհանրապես նման ածանցման բայական նախատիպը սովորական չէ[9]: Այլ ածանցներ, որոնք միացել են գրաբարյան բաղադրյալ հիմքերին. ՆՅԲ՝ *աւելադրեմ*- ՅԱ՝ *աւելադրական* գրեր (1896,3,76), ՆՅԲ՝ *բանաքաղ*- ՅԱ՝ *բանաքաղութիւն* (1891,4,102): Երբեմն ածանցները կազմում են նաև գրաբարին հատուկ բաղադրություններ. *եզական տառադարձութիւն* (1888,12,209), *երբայատիկ ուղղագրութիւն* (1888,12,210), *աշխարհիկ լեզու* (աշխարհաբար) (1888,3,34), *(բառիմաստի) հնքնակացութիւն* (1896,3,77):

---

[8] Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 227:
[9] Տե՛ս Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 134-138:

2. Նախածանցում: Նախածանցավոր նոր կազմությունները հանդեսում սակավաթիվ են: Գոյություն ունեցող մի քանի կաղապարների իրացումների հազվադեպ լինելը հնարավորություն չի տալիս որոշել դրանց դրսևորման օրինաչափությունները: Նկատելի է, որ նախածանցները տերմինների կազմությանը մասնակցում են գերազանցապես բառակապակցական տերմինների կազմում, ընդ որում կցվելով հիմնականում տերմինային բառերին՝ բուն տերմինակազմական շատ քիչ արժեք են դրսևորում. տար - տարականոն հոլովմունք (1899,5,148), համ- համազգի լեզուներ (1890,5,151)- համացեղ լեզուք (1890,5,151), նախ - տերմինի նախածանցման օրինակներ. նախատառ բաղաձայն (1899,7,207), նախաընձադիր (1891,10,289):

3. Վերջածանցում: Ինչպես նշեցինք, վերջածանցները զուգահեռ նաև խոսքիմասային ցուցիչներ են, և քանի որ «լեզվաբանական տերմինների գերակշռող մասը գոյականներ կամ գոյականաբար կիրառված ածականներ են[10]», իսկ բառակապակցական տերմիններում երկրորդական բաղադրիչները հատկանշային բնույթ ունեն, դրանց կազմությանը մասնակցում են գլխավորապես գոյականակերտ և ածականակերտ վերջածանցները:

Գոյականակերտ վերջածանցում: Հանդեսում գոյական տերմիններ են կերտվում հետևյալ վերջածանցներով -ութիւն, -ում, -իչ, -ուած: -Ութիւն ածանցի միջոցով հիմնականում արտահայտվում է կամ գոյական սեռային տերմինի վերացականություն, կամ ածական տեսակային տերմինի վերացականություն, այս դեպքում սեռ-տեսակ հարաբերությունը որոշչայինից փոխվում է հատկացայինի: Մյուս ածանցների միջոցով տերմինային գործողությունն առարկայանում է՝ կազմվում են բայանուններ: Սրանց կազմությանը մասնակցում է նաև -ութիւն-ը:

Ածանցների նկարագրությունը շարադրում ենք ըստ նրանց կենսունակության նվազման:

«Լեզվաբանական տերմինների մեծ մասը բնորոշում է վերացական հասկացություններ, ուստի և այս տիպի տերմինների կազմությանը հայոց լեզվում ամենից ավելի հաճախակի մասնակցում է... -ություն վերջածանցը...»[11]: Այս ածանցը միշտ էլ կենսունակ է եղել[12]: Հանդեսում այն տերմինակազմության ածանցային ամենակենսունակ միջոցն է, իրացումների ընդհանուր քանակով գերազանցում է մյուս ածանցների կիրառություններին: -Ութիւն վերջածանցը առավելապես գործուն է բարդածանցավոր կառույց-

[10] Լ. Հ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 285:
[11] Տե՛ս նույն տեղը, էջ 286:
[12] Տե՛ս Ս. Հ. Մուրադյան, Բառագիտություն, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 94:

ներում. բաւերու շրջափոխութիւն (1899,10,293), (1890,2,43), ուղղագործութիւն (1888,5,87), բեւեռաքննութիւն (1887,2,21) և այլն: Ջուտ ածանցավոր կառույցներում գործածվում է բացառապես նախածանցների զուգահեռմամբ. բառի փոխարկութիւն (1895,8,231), համառոտութիւն (1889,8,159): -Ութիւն ածանցը բառակապակցական տերմիններում հաջորդ կենսունակ -ական ածանցի համեմատությամբ նվազ հաճախականություն ունի պայմանավորված գոյականակերտ նշանակությամբ: Քանի որ բառակապակցական տերմինները գոյանում են, երբ հիմք-հասկացության որևէ հատկանիշ կամ հատկանիշներ գործածական անկախություն են ձեռք բերում_որոշչի կամ որոշիչների դերով, ածականակերտ -ական-ը այս հարաբերության մեջ ավելի ակտիվ դրսևորում է ունենում: -Ութիւնն այս դեպքում, ինչպես նշել ենք, տեսակային տերմինատարրին կարող է վերացականություն հաղորդել. (լեզվի) կցողութիւն (1897, 5,154), արտասանութեան պէսպիսութիւնք (varietes) (1888,9,153), բաղաձայնի հնչականութիւն (somorite) (1899,10,290) և այլն:

Խոսքիմասային նշանակությամբ, ըստ Ս. Ա. Գալստյանի, այս ածանցը բաղադրություններ է կազմում AR1, NR1, VR1 (A ածական, N գոյական, V բայ, R1 գոյականական ածանց[13]) կաղապարներում[14]: Հանդեսում այս կաղապարների հերթականությունը ըստ դրսևորման հաճախականությամբ հետևալն է. AR1, VR1, NR1: Առաջին կաղապարի կրկնածանց տիպի կենսունակության պատճառը վերևում ակնարկեցինք. –ութիւն ածանցը հանդեսում հաճախ կրկնածանց է կազմում ածականակերտ ածանցների հետ վերացականություն հաղորդելով դրանցով կազմված բաղադրություններին: Նախատիպը ածանցավոր ածականն է. անջատականութիւն (1897,3,72), շեշտաւորութեան եղանակ (1896,8,228), հոլովականութիւն (1896,10,293), եղանակաւորութիւն (modification) (1896,6, 166), լեզուին գործարանաւորութիւն (1896,8,229), ձայնաւորի սաստկութիւն (1896,8,227), յեղականութիւն (version) (1896,10,293) և այլն: -Ութիւն վերջածանցը նախորդ տեսակի համեմատ նվազ հաճախադեպությամբ միանում է նաև անածանց հիմքերին: Նախատիպն է ա/ արմատական ածականը. բառի կարճութիւն (1887,12,188), օտարութիւն (օտարաբանություն) (1891,12,359), բ/ բարդ ածականը. բայերու ձեւաշատութիւն (1898,10-11,297), քաջահնչութիւն (1900,3,70), խոնարհման կանոնաց զարտուղութիւն (1891,3,82): VR1 կաղապարի կենսունակությանը նպաստող հանգամանք է «գրել», «փոխել», «խօսել» բայերի վերջնարմատ հաճախ

---

[13] Ս. Ա. Գալստյանի կիրառած պայմանական նշաններն օգտագործել ենք նույնությամբ., բանաձևերի մասին տես նշվ. աշխ., էջ 33:

[14] Տես նույն տեղը էջ 167: Հետագա դասակարգման ընթացքում նաև նկատի է առնված նշված աշխա-տության մեջ կիրառված դասակարգման օրինակը:

հանդիպող դիրքը. քանդակագրություն (1898,5,137), սխալագրություն (1891,8,229), տառագրություն (1889,2,26), շիրմագրություն (1898,8-9,238), կնքագրություն (1898,8-9,239), վիմագրություն (1893,3,88). նմանագրություն (par assimilation) (1895,12,371), տառափոխություն (metathesis) (1894,5,157), ձայնափոխություն (1891,2,44), կերպախօսություն morphologie (1896,2,47), հագագախօսություն (1899,10,289), նաև անուանառություն (1888,5,77), բայից կազմակերտություն (1887,2,23), բանաքաղություն (1891,4,102), բազմահամադրություն (polysynthetisme) (1896,5,151) և այլն: Նշված օրինակներում որպես նախատիպեր հանդես են գալիս բայական բառակապակցությունները, որոնք և առավելապես բնորոշ են այս կաղապարի իրացումներին: Բայարմատնախատիպը հանդես է գալիս մեկ օրինակի հազվադեպությամբ. բառի խնայություն (1887,12,188): NR1 կաղապարը չունի նախորդների տարածվածությունը: Դրա կենսունակությունը ևս կախում ունի գործածական բաղադրիչի առկայությունից. ձայն (ձայնավոր, հնչյուն) տերմինը, ունենալով հաճախակի կիրառություն, կարող է բաղադրության կազմում ածանցվելով՝ վերացականություն արտահայտել. նմանածայնություն (1896,8,228), աղօտածայնություն (1899,10,292), խառնածայնություն (1888,7,119): Նշված օրինակներում բաղադրության նախատիպը բարդ գոյականն է: Սա օրինաչափ է նաև մյուս կիրառությունների դեպքում. օտարածեւություն (1898,4,98), հագագաբանություն (1899,10, 289), լեզուի միակերպություն (1887,9,133), յատկաբանություն (terminologie), վերնագրություն (1891,7,197) և այլն:

Մյուս վերջածանցները տերմինակազմությանը մասնակցում են պասիվ կերպով: Դրանք ներկայացնող կաղապարների իրացումների քանակը փոքր է:

«-Ում ածանցը գործում է VR1 կաղապարում[15]», քանի որ բայանուն կազմող ամենակենսունակ ածանցն է: Հանդեսում որպես նախատիպեր դրվում են հիմնականում անցյալի հիմքերը. նոյնացում (assimilation) (1896,4,114), ձայնաւորներու հաւասարացում (1894,3,էջ84), ձայնաւորի տկարացում (1896, 8,227), հնչիւններու ստուարացում (1888,6,102) և այլն: Նախատիպերը կարող են լինել պարզ, ածանցավոր ու բարդ. հնչիւնի պայթում (explosition) (1899, 10,290), տառից յեղաւորում (1896,3,75), բառաբաժանում (1898,5,135) և այլն::

-Ի՛չ վերջածանցը և՛ գոյականակերտ է, և՛ ածականակերտ, հանդեսում տերմինակազմությանը մասնակցում է նշված զույգ գործառույթով: Նախ գոյականակերտման մասին: Կաղապարն է VR1[16]: Այս կաղապարի համար որպես նախատիպեր դրվում են պատճառական բայերի գրաբարյան հիմքերը. ձայնական ծանուցի՛չ (1896,10,292) ձայնական ամբողջացուցի՛չ (1898,8-9,228).

---

[15] Ս. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 178:
[16] Տե՛ս նույն տեղը, էջ 139:

Որպես նախատիպ կարող է դրվել նաև ներգործական բայահիմքը. նույնութեան (identite) նշանակիչ (1898,12,378):

- Ուած վերջածանցով. VR1- տառական յօրինուած (1887,2,22): -Ված վերջածանցը ժամանակակից հայերենում գործածվում է որպես ածականակերտ, գոյականակերտ գործառույթ ունի –վածք վերջածանցը[17], այս վերջինիս է համարժեք հանդեսի –ուած-ը:

Ածականակերտ վերջածանցում: Հանդեսում տերմինակազմությանը մասնակցում են -ական, -ային, -աւոր, -ացի, -եան, -ող, -ոտի, -իչ, -իկ, -պատիկ, -ուկ, -ուն, -գոյն ածականակերտ ածանցները: Պետք է նկատի ունենալ, որ դրանք իրենց բուն ածականակերտ նշանակությամբ գերազանցապես գործածվում են բառակապակցական տերմիններում՝ տեսակավորելով ու կոնկրետացնելով գոյականով արտահայտված հիմք-հասկացությունը: Ընդհանրապես ածականակերտ ածանցների կախյալ բաղադրիչի դերով գործածությունը օրինաչափ է, դրանցով կազմված տերմինատարրերը առանձին կարող են գործածվել փոխանունաբար՝ ստանալով գոյականի արժեք[18]:

Ներկայացվելիք բառակապակցական տերմինները, ինչպես և ներկայացվածները, մեր տվյալներով նորակազմ են, հետևաբար դրանց տերմինատարրերի սեռատեսակային հարաբերությունը ևս նոր է, ու քանի որ հիմնականում ածականակերտ ածանցման միջոցով է արտահայտվում տեսակի հատկանշային կապը հիմք-հասկացության հետ, ուրեմն նորակազմ բառակապակցական տերմինների ներսում ածանցումը պետք է համարել տերմինակազմությանը մասնակից միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ ածանցված պատրաստի կաղապարը վերաիմաստավորված կիրառությամբ է տեսակավորում հասկացությունը. օրինակ՝ <u>ազդեցիկ</u> բայ (1896,5,150), <u>մեռձաւոր</u> լեզուներ (1897,3,69):

«Ածականական կազմությունների մեջ ամենակենսունակ և կանոնավորապես հանդիպողը -ական վերջածանցով կերտված տերմիններն են: Սա (բառ կամ բառի մի բաղադրիչ + ական վերջածանց) փաստորեն, «ածականտերմինների» ամենա-բնորոշ և տարածված մասնավոր կաղապարն է...[19]»: Ինչպես -ութիւն-ը, -ական վերջածանցը ևս ակտիվությամբ կայուն է եղել ու կա լեզվի երեք փուլերում[20]: Հան-դեսում գործածության համախականությամբ այս ածանցը զիջում է միայն գո-յականակերտ –ութիւն ածանցին: «- Ական ածանցը խիստ գործուն է NR2 և VR2 կաղապարներում[21]» (R2- ածականական ածանց):

---

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 164-165:
[18] Տե՛ս նույն տեղը, էջ 290:
[19] Լ. Հ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 290-291:
[20] Տե՛ս Մ. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 93:
[21] Ս. Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 65:

Հանդեսում առավել գործուն է NR2 կաղապարը: Այս կաղապարում նախատիպերը գոյականական են կազմության բոլոր դրսևորումներով. պարզ, ածանցավոր և բարդ. ա/ գործածական ակտիվություն են ցուցաբերում պարզ գոյական նախատիպ ունեցող տերմինները. կառափակաս ծայն (1897,5,154), ճչակաս (Affricata) ծայն (1900,1,14), ծայնակաս ոչնչացում (1896,3,76), մասնակաս լեզուներ (1897,7,213), բառակաս թարգմանութիւն (1899,1,19), բառակաս-գիր (1897,5,154), տառակաս երեւոյթ (1896,6,182) օրէնք (1890,5, 101) և այլն, բ/ Համեմատաբար սակավ դրսևորում ունեն ածանցավոր գոյական նախատիպ ունեցող տերմինները. յաւելուածակաս մասնիկով լեզուներ (1896, 3,76), վայրկենակաս գրեր (1900,1,14), գրչակաս փոխառութիւն (1899,1,17), գ/ Սակավաթիվ են նաև բարդ գոյական նախատիպ ունեցող տերմինները. լեզուաց ազգաբանակաս խնամութիւն (1897,3,69), լեզուաց ցեղաբանակաս դասակարգութիւն (1896,2,47), բնագրաքննակաս խորհրդածութիւն (1891,6, 169), բազմասեռակաս (շատ նախալեզուներ ընդունող) լեզուագէտներ (1896,6,165): Հանդեսում VR2 և AR2 կաղապարները նախորդի համեմատ քիչ գործուն են և ունեն գրեթե նույնաքանակ իրացումներ: VR2 -ը հիմնականում ունի բայական բառակապակցություններով նախատիպեր. լեզուաց ճիւղագրակաս տախտակ, ծառ (1897,3,69), աւելադրակաս գրեր (1896,3,76), լեզուաց կերպախօսակաս կազմութիւն (1896,6,166), ձեւերու յառաջգայակաս (genesiaque) զարգացում (1896,8,229) և այլն: VR2 –ը մեկ օրինակի հազվադեպությամբ ունի նաև բայարմատ-նախատիպ. շրջակաս տառ (1897,7,214), փոխանունական կիրառություն. թաւ շրջականեր (1897,7,214): AR2 կաղապարի նախատիպերը հիմնականում ածանցավոր ածականներ են. արմատի կցողակաս աստիճան (1896,3,76), տառերու փակողակաս (occlusif) յատկութիւն (1899,10,293), անջատողակաս (isolant) լեզուներ (1896,թիւ3,էջ76), լեզուներու յօրինուածակաս խումբեր (1896,1,2), սաստկակաս (emphatique) հնչիւն (1899,10,291), գրաւորակաս մթերք (1888,7,121) և այլն, նաև պարզ ածական. պարզակաս արմատ (1899,7,203):

VR2 կաղապարում –իչ ածանցը կազմում է ածականներ[22]: Ինչպես գոյականական, այնպես էլ այս կաղապարի համար որպես նախատիպեր հիմնականում դրվում են պատճառական բայերի գրաբարյան հիմքերը. սաստկացուցիչ արմատ (1896,10,292), սաստկացուցիչ բայ (1896,5,150), (արմատի) մածուցիչ աստիճան (1896,3,76), զօրացուցիչ ծայն (1899,7,205) և այլն: Այս կաղապարում որպես նախատիպ կարող են դրվել նաև ներգործական

[22] Տես նույն տեղը, էջ 139:

բայահիմքերը. միաւորիչ (incorporante) լեզուներ (1896,5,151), կազմիչ տարր (1896,5,150), օժանդակիչ նախդիր (1887,11,163):

-Աւոր ածանցով կազմությունները քիչ են. NR2- գործարանաւոր լեզուներ (1896,3,76), արուեստաւոր մատենագրական լեզու (1898,10-11,312), VR2 - կրկնաւոր բառեր (1899,7,202): Փոխանունական կիրառություն. «...ինչու՞ միայն *վրա* բառն է որ կը տուժէ, եւ միւս յ-աւորներն ազատ են իրենց յ ին պահելու...» (1889,1,9):

« -Յան ածանցը խիստ գործուն է NR2 կաղապարում...[23]»: Հանդեսում միայն նշված գոյականական նախատիպով կաղապարն է գործում. միարմատեան անուն (1894,7,211), եռարմատեան բայեր (1896,10,292), երեքլեզուեան բառարան (1889,5,85), չորեքկերպեան յարմարագրութիւն (1888,5,75), չորեքկէտեան (կետադրական նշան) (1898,5,138), միջինմեսրոպեան տառեր (1897,3,68), ժողովրդեան բարբառ (1899,10,295): Փոխանունական կիրառություն. երեքդիմեանններ (1898,12,378):

-Ող ածանցը դրվում է բայահիմքերի վրա, նախատիպերը կարող են լինել, ինչպես ներկայի, այնպես էլ կատարյալի հիմքերը. հնչող գրեր (1900,1,15), (արմատի) յարող աստիճան (1896,3,76), թանձրացնող նշան (1889,1,9):

-Իկ, ուկ, -ուն, -ային, -ոտի, -ացի, -պատիկ վերջածանցները հանդեսում տերմինակազմությանը մասնակցում են մեկական օրինակներով. VR2- պայթուցիկ գիր (1900,1,13), փոխանունական կիրառությամբ. միջին պայթուցիկներ, լերկ պայթուցիկներ (1900,1,13), թվական նախատիպով երեքաատիկ ուղղագրութիւն (1888,12,210), VR2- նորելուկ բառ (1895,12,359), VR2- դողդողուն տառեր (1894,1,28), NR2- պարզ հագագային (spirante) տառեր (1899,10,293), AR2- օտարոտի կազմակերպութիւն (1888,3,35), AR2- գաւառացի լեզու (1888,7,121):

-Գոյն վերջածանցի գերադրական նշանակությունը և քերականական է, և բառակազմական, հետևաբար այն քերականական-բառակազմական ածանց է[24]: թանձրացոյն հնչիւն (1888,12,210), թուլացոյն գիր (1888,12,210), տկարացոյն ձայնաւոր (1894,5,156), խստացոյն հնչում (1888,12,209), աղօտացոյն ձայնաւոր (1894,5,156) և այլն:

Միայն քերականական նշանակություն ունեն վերջավորությունները, որոնք կազմում են բառաձևեր[25]: Հանդեսում նոր բառաձև է գոյանում

---

[23] Նույն տեղը, էջ 146:

[24] Տե՛ս Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 140-141:

[25] Ըստ Ա. Ս. Սուքիասյանի դասակարգման, բաղադրյալ բառերի տեսակ են վերջավորություններով կազմված բառաձևերը. տե՛ս ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 265:

անվանական տերմինի բայական գործածության դեպքում. «...հայերէն լեզուն ունի եւ կամ մեծ յարմարութեամբ կարող է բառոել համապատասխան բառեր...» (1889,1,7), «տողելով... կը գրէ» (1891,7,198), բառախմբեր տողել (1894,5,155):

4. Համածանցում: Համածանցավոր կաղապարները հանդեսում շատ են, քիչ են դրանց իրացումները, հիմնականում սահմանափակված են մեկ-երկու օրինակներով: Նախածանցները, ինչպես ցույց տվեցինք, քիչ են հանդիպում մեկ ածանցով կազմություններում, այլ ածանցների հետ ակտիվ են զուգորդվում, ըստ այդմ առավելապես դրսևորվում են համածանցավոր կազմություններում: Զուգահեռ ածանցի առկայությունը վերջածանցումը ոչ սահմանափակում է, ոչ ակտիվացնում. վերջածանցների գործածության սահմանը, ինչպես առանձին կիրառությունների դեպքում, որոշում է ածանցի կենսունակության աստիճանը:

Հանդեսում համածանցավոր կազմությունները ներկայացնում ենք զուգորդման հիմք ընդունելով համեմատաբար կայուն դրսևորում ունեցող ածանցները. ան-, առ-, տար-, համ-, փոխ-, բաղ-, ամենա- + -ութիւն = անմանածայնութիւն (dissimilation) (1900,3,69), առընթերադրութիւն (juxtaposition) (1896,3,77), տարածայնութիւն (dissimiliation) (1894,1,29), համածայնութիւն (assimilation) (1894,1,29), փոխագրութիւն (1898,10-11,312), բաղագրութիւն (1888,12,221), ամենախօսութիւն (pasilalie) (1887,12,187) և այլն:

ան-, համ-, յար- + -ական = անփոփոխական նշանակալից ձայններ (1896,3,76), անհնչական տառ (1893,3,84), անբերական նախադասութիւն (1888,12,215), համաշխարհական լեզու (1896,1,2), համածայնական (syntaxique) ձեւեր (1898,3,79), յարաբերական գրեր (1896,3,76), փոխանունական կիրառություն. «...բառերն ընտրութեամբ առնուած են եւ անգործածականները մերժուած են...» (1890,9,218) և այլն:

տար-, համ-, արտ- + -ում = տարածայնում (1894,5,157), համածայնում (assimilation) (1894,5,157), արտահնչում (1899,10,291) և այլն:

ան- + -աւոր, -արան = անգրաւոր (1888,9,153), անյօդաւոր նշանակալից ձայններ (1896,3,76), բաղածայն-ներուն անձայնաւոր շարք (1887,2,21), անգործարան լեզուներ (1896,3,76) և այլն:

Հազվադեպ իրացումներ ունեն. նախ + իկ, աւոր = նախամասնիկ (1893,11,339), հնդեւրոպական նախաւոր լեզու (1899,8,234), չ + ող = չհնչող գրեր (1900,1,15), ներ + իկ = ներդարձիկ տառ (1897,7,214):

Նշված օրինակներում տերմինակազմական նորությունը հիմնականում արտահայտված է նախածանցման միջոցով. մասնիկ- նախամասնիկ, հնչական տառ- անհնչական տառ, գրութիւն- բաղագրութիւն: Նախածանց-

ման և վերջածանցման միաժամանակյա նորության դեպքում անանխածանց նախատիպը կամ անվերջածանց նախատիպը առանձին չեն գործածվում. ինչպես (ան)գործարան լեզուներ- անգործ(արան) լեզուներ, ներդարձ(իկ) տառ- (ներ)դարձիկ տառ: Տերմինակազմական նորություն է արտահայտում վերջածանցումը, եթե գոյականական վերջածանցը ածականականով փոխելու միջոցով համածանցավոր գոյականը տեսակային կիրառություն է ստանում. համածայնութիւն- համածայնական ձեւեր:

ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՀ- Լեզվի և ոճի հարցեր:
ՀԱ- Հանդէս ամսօրեա
ԼՀԳ- Լրաբեր հասարակական գիտությունների:
ԼԲ- Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
ՆՀԲ- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1981:
ՊԲՀ- Պատմա- բանասիրական հանդես: